



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
S 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

RUZAN SAHAKYAN

**PROCESS BASED BUDGETING IMPLEMENTATION
PROBLEMS IN COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA**

Key words: commercial bank, management, business processes, process based budgeting

Budgeting is a modern technology of financial management in commercial banks. Meanwhile, budgeting current mechanisms have some disadvantages. In the western management process based budgeting is widely implemented, which has significant advantages compared to the classic budgeting methods. At the same time research shows that process based budgeting implementation in commercial banks faces significant problems.

ՆՈՐԱՅՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀՈՒԹԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. բանկի շահույթ, շահութաբերության գործակիցներ, շահութաբերության վերլուծություն, բանկային համակարգի շահութաբերության միտումներ

ՀՀ բանկային համակարգը թևակոխում է զարգացման նոր որակական փուլ, որի առանցքային մարտահրավերներից են բանկային գործունեության աննախադեպ արագ տեմպերով թվայնացումը և ֆինանսական կայունության ապահովումը մրցակցության թեժացման, անորոշությունների ու ռիսկերի պերմանենտ աճի պարագայում: Ֆինանսաբանկային համակարգում ձևավորված իրավիճակի հրամայական պահանջներն են ինչպես առանձին բանկերի, այնպես էլ բանկային համակարգի գործունեության արդյունավետության և շահութաբերության ցուցանիշի մասնավորապես որակական վերլուծությունը և բացահայտված միտումների իրատեսական գնահատումը:

Շահութաբերությունը, որպես տնտեսագիտական կատեգորիա, միշտ էլ բանավեճերի առարկա է հանդիսացել տնտեսագետների շրջանում: Առավել իրարամերժ կարծիքների տեղիք են տալիս հատկապես շահութաբերության գնահատման համակարգը և շահութաբերության տնտեսագիտության մեկնաբանությունը: Մյուս կողմից՝ շահութաբերությունն առնչվում է ֆինանսատնտեսական գործունեության բազմաթիվ ցուցանիշների հետ՝ որպես արդյունավետության գնահատման ամփոփ ցուցանիշ, թեպետ ժամանակակից տնտեսագիտության մեջ բանավիճային հիմնախնդիր է արդյունավետության կատեգորիայի մեկնաբանությունը նույնպես:

Շահութաբերության մեկնաբանությունն ու վերլուծությունը որոշակի առանձնահատկություններ են դրսևորում բանկային համակարգի պարագայում: Նախ՝ անհրաժեշտ է որոշակիացնել, թե ինչպես պետք է գնահատել առանձին առևտրային բանկի կամ ամբողջ բանկային համակարգի գործունեության արդյունավետությունը: Առևտրային բանկերում կարևորվում է շահույթի վերլուծությունը, քանի որ բանկային համակարգի ընդհանրական շահույթի ցուցանիշը հաճախ չի բացահայտում առանձին բանկերի շահույթի միտումները: Այսպես, օրինակ, 2016 թ. նման արտառոց շահույթ ստացավ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն՝ «Առէկսփիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ գնման արդյունքում ստացված բացասական զուդվիլի հաշվին, որն էական ազդեցություն ունեցավ համակարգի շահույթի ցուցանիշի վրա:¹

Ինչ նպատակ է հետապնդում հիմնական կապիտալի կազմում գլխավոր պահուստի առանձնացումը, որն իր տնտեսագիտական բովանդակությամբ նույն չբաշխված շահույթն է: Արդյո՞ք շահույթի ցուցանիշը կամ շահութաբերության աճը միանշանակ ձևով վկայում է այն մասին, որ համակարգն արդյունավետ է գործում:

Անվիճելի է, որ շահութաբերության ցուցանիշները վիճակագրորեն կամ ձևականորեն են գնահատում բանկի գործունեության արդյունավետությունը:

«Ք բանկային համակարգի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել դրա եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

Կարևոր ցուցանիշ է ծախսերի մեջ տոկոսային ծախսերի և տոկոսային եկամուտների կազմի, կառուցվածքի և տեսակարար կշռի վերլուծությունը, քանի որ դրանք զուտ տոկոսային եկամուտների հաշվարկի հիմքում են:

Վերջին տարիներին «Ք բանկային համակարգի տոկոսային ծախսերի տեսակարար կշիռն անընդհատ աճել է: Այսպես՝ եթե 2005 թ. տոկոսային ծախսերի տեսակարար կշիռը կազմել է 27.3%, ապա 2016 թ.՝ 62.0%: Վերջինս վկայում է այն մասին, որ «Ք բանկային համակարգում գնալով աճել են ներգրավված միջոցները: «Ք բանկային համակարգի 2016 թ. ներգրավված միջոցների ցուցանիշի վրա էական ազդեցություն ունեցավ «Անելիքբանկ» ՓԲԸ-ի կողմից արձանագրված էական աճը, որը, սակայն, ժամանակավոր բնույթի էր²:

Նույն միտումը նկատվել է նաև տոկոսային եկամուտների մասով: Եթե 2005 թ. տոկոսային եկամուտները կազմել են «Ք բանկային համակարգի եկամուտների շուրջ 59.9%-ը, ապա 2016 թ.՝ 76.7%-ը: Ի տարբերություն տոկոսային ծախսերի միտումների, տոկոսային եկամուտների աճի միտումը շարունակվել է մինչև 2012 թ.՝ հասնելով «Ք բանկային համակարգի առավելագույն ցուցանիշին՝ 80.0%: 2013 թ. սկսվել է բանկային

¹ <http://b4b.am/archives/news/22-%D5%B4%D5%AB%D5%AC%D5%AB%D5%A1%D6%80%D5%A4-D5%A4%D6%80%D5%A1%D5%B4%D5%AB-%D5%B7%D5%A1%D5%B0%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9-%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D5%BE-%D5%A7-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6>

² <http://b4b.am/archives/news/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D5%BE-%D5%A7-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%AF%D5%AB>

համակարգի տոկոսային եկամուտների տեսակարար կշռի անկման միտում. 2013 թ.' 79.1%, 2014 թ.' 77.3%, 2015 թ.' 76.5% և 2016 թ.' 76,7%: Տոկոսային եկամուտների տեսակարար կշռի նվազումը պայմանավորված է ինչպես վարկային ներդրումների աճի, այնպես էլ ժամկետանց վարկերի տեսակարար կշռի ավելացմամբ: Այսպես՝ չաշխատող վարկերի (հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի՝ առանց անհուսալի ճանաչված վարկերի) տեսակարար կշիռը 2009 թ.-ին կազմել է 4.21%, իսկ 2016 թ.' 6.69%: Վարկային ներդրումների վերջին տարիների աճի միտումը (բացառությամբ 2015 թ.) թերևս մեթոդաբանական բնույթի է, քանի որ հատկապես վերջին տարիներին, նկատի ունենալով գյուղատնտեսության բնագավառում պարբերաբար կրկնվող ֆորս-մաժորային իրավիճակները, կառավարության որոշումներով արձանագրվել է գյուղատնտեսական վարկերի ժամկետի երկարաձգում կամ ներում, և նոր վարկեր են տրամադրվել, որոնք վերջնահաշվում արհեստականորեն ավելացնում են, այսպես կոչված, տրամադրված վարկերի ծավալը: Այստեղ նույնպես իր դերակատարությունն է ունեցել «Անելիքբանկ» ՓԲԸ վարկային պորտֆելի կտրուկ աճը՝ մեկ գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվի կրկնակի՝ 38.21% խախտման պարագայում:

Ինչ վերաբերվում է չաշխատող վարկերի ծավալին, որպես ՀՀ բանկային համակարգի շահութաբերության նվազման հիմնական և առանցքային հետևանք, ապա պատկերը հետևյալն է. 2009 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային ներդրումներում կազմել է 4.21%, 2010 թ.' 2.77%, իսկ հաջորդող տարիներին նկատվել է պերմանենտ աճ: Այսպես՝ 2011 թ.' 3.25%, 2012 թ.' 3.31%, 2013 թ.' 4.01%, 2014 թ.' 6.15%, 2015 թ.' 6.98%, 2016 թ.-ին՝ 6,69%:

Մյուս կողմից, պայմանավորված ակտիվների դասակարգման պայմանների մեղմացմամբ, ՀՀ բանկային համակարգում «հաճախորդներ ներգրավելու» նպատակով երբեմն ավելի ցածր տոկոսադրույքով վարկեր են տրամադրվում: Արդյունքում՝ իրականում վարկերը չեն մարվում, այլ բանկից բանկ են տեղափոխվում, որը վիճակագրորեն նույնպես վարկերի ծավալի ավելացում է արձանագրում:

Կոռելյացիոն կապ է նկատվում նաև տոկոսային եկամուտների նվազման և արտարժույթային վարկերի տեսակարար կշռի ավելացման միջև:

Աղյուսակ 1

Ցուցանիշներ	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
1	2	3	4	5	6
Արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը, %	65.7	63.7	67.4	66.4	63.35
Տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը, %	80.0	79.1	77.3	76.5	76.7

Այս կոռելյացիոն կապը, թերևս, կարելի է մեկնաբանել այն պատճառաբանությամբ, որ արտարժույթային վարկեր տրամադրվել են անձանց, որոնց եկամուտները ՀՀ դրամով են: Հետևաբար՝ վարկայինին այս պարագայում ավելանում է նաև արտարժույթային ռիսկը:

ՀՀ բանկային համակարգի շահութաբերությունը բնութագրող ցուցանիշների անկում է նկատվում 2012 թ. սկսած: Վնասով աշխատող բանկերի քանակը տարեցտարի մոտենում է 2009 թ., այսինքն՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիների ցուցանիշին: Այսպես՝ 2005 թ. սկսած՝ վնասով աշխատել է առավելագույնը 8 բանկ, 2010 թ.՝ ընդամենը 1 բանկ: Սակայն, 2011 թ. սկսած, վնասով աշխատող բանկերի քանակն աճել է՝ 2011 թ.՝ 2, 2012 թ.՝ 4, 2013 թ.՝ 6, 2014 թ.՝ 6 և 2015 թ.՝ 7 բանկ: Իսկ 2016 թ. վնասով աշխատել է 3 բանկ: Ըստ էության, տարեկան վնասի հիմնական պատճառներից մեկը բանկերի վարկային պորտֆելի որակի վատթարացումն է, քանի որ որոշ վարկեր տարեվերջին անհուսալի են ճանաչվում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից դուրս են գրվում, ինչի հետևանքով կտրուկ աճում է բանկի վնասը:

Վերջին երեք տարիներին նվազման կտրուկ միտում է դրսևորում նաև ՀՀ բանկային համակարգի շահույթի ցուցանիշում: Այսպես՝ ՀՀ բանկային համակարգի շահույթի մեծությունը 2013 թ. կազմել է 48.1 մլրդ ՀՀ դրամ, 2014 թ.՝ նվազել շուրջ 46.4 տոկոսով և կազմել 25.8 մլրդ դրամ, իսկ 2015 թ. շարունակվել է նվազման միտումը՝ 2013 թ. համեմատ 63.2%-ով և կազմել 17.7 մլրդ դրամ: 2016 թ. համակարգի շահույթի ցուցանիշը որոշակիորեն տիպական չէ՝ պայմանավորված կապիտալի ավելացման գործընթացներով: Եթե 1 բանկի հաշվով 2013 թ. շահույթի մեծությունը կազմում էր 2.2 մլրդ դրամ, ապա 2015 թ. այդ ցուցանիշը նվազել է 63.6%-ով և կազմել ընդամենը 0.8 մլրդ դրամ:

Այսպիսով՝ ՀՀ բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշների վատթարացման միտումը խորանում է հատկապես վերջին երեք տարիների ընթացքում: Դա երևում է ըստ ակտիվների և կապիտալի շահութաբերության ցուցանիշների անկման: Ըստ էության, վերոհիշյալ ցուցանիշներն առավելագույն մակարդակ են ապահովել 2005–2007 թթ., որից հետո նկատվում է անկման միտում: Եթե բացառենք 2009 թ., որպես ոչ տիպական ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով, ապա 2010 թ. պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 2

	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
1	2	3	4	5	6	7	8
ROA, %	2.1	1.80	1.90	1.44	0.71	-0.63	0.9
ROE, %	10.3	9.79	11.4	9.07	4.47	-4.26	5.7

Համեմատության համար նշենք, որ Եվրոպական կենտրոնական բանկի վերահսկողության տակ գտնվող բանկերի համանուն ցուցանիշները հետևյալն են՝ ROA - 0.47% և ROE - 7.10% (2017 թ. երկրորդ եռամսյակի դրությամբ)¹:

Համաձայն 2016–2018 թթ. Հեռանկարային զարգացման ծրագրերի՝ ՀՀ բանկերի կողմից չի կատարվել շահութաբերության ցուցանիշների հաշվարկ 2015 թ. համար: ROA-ն թերակատարվել է 1.5%-ով, իսկ ROE-ն՝ 9.9%-ով:

Այսպիսով՝ բանկային համակարգի շահութաբերության միտումները վերլուծելու նպատակով նախ՝ անհրաժեշտ է իրականացնել առանձին բանկերի շահույթի աճի մի-

¹ <https://www.bankingsupervision.europa.eu/banking/statistics/html/index.en.htm>

տումների վերլուծություն և շահույթի, որպես բանկի գործունեության առանցքային ցուցանիշի որակական հաշվարկ և ճիշտ բաշխում՝ հետագա գործունեության ընդլայնման համար: Շահույթի ստացումը առևտրային բանկի կողմից ինքնանպատակ չէ, այն պետք է արդյունավետ գործունեության երաշխիք հանդիսանա: Սա է պատճառը, որ ՀՀ կենտրոնական բանկը ներկայումս որոշակիորեն սահմանափակում է չբաշխված շահույթը: Գործող կանոնակազմի համաձայն՝ նորմատիվային կապիտալի հաշվարկման ժամանակ չբաշխված շահույթը բանկի հիմնական կապիտալի հաշվարկում ներառվում է կանոնակարգի պահանջներին բավարարող կանոնադրական հիմնադրամի առավելագույնը 150%-ի չափով¹: Բացի այդ, ներկայումս կենտրոնական բանկը լայնորեն կիրառում է ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մոդել, որպեսզի, ձևական ցուցանիշների հետ մեկտեղ, համապատասխան գործիքակազմի օգնությամբ բացահայտվեն առանձին առևտրային բանկերի ռիսկային ոլորտները և մեխանիզմներ մշակվեն ապագային միտված համարժեք գործողություններ մշակելու համար:

НОРАЙР САФАРЯН

ТЕНДЕНЦИИ РЕНТАБЕЛЬНОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА

Ключевые слова: прибыль банка, коэффициенты рентабельности, анализ рентабельности, тенденции рентабельности банковской системы

Банковская система Армении перешла на новый качественный уровень развития, ключевыми вызовами которого являются беспрецедентно быстрая цифрализация банковской деятельности и обеспечение финансовой стабильности, в свете ужесточенной конкуренции, неопределенности и перманентного роста рисков. Требованием в сложившейся ситуации финансово-банковской системы является оценка эффективности и рентабельности деятельности как отдельных банков, так и банковской системы в целом, в частности качественный анализ и реальная оценка выявленных тенденций.

NORAYR SAFARYAN

TENDENCIES OF PROFITABILITY OF THE BANKING SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: bank's income, profitability coefficients, income analysis, banking system profitability trends

Banking system of Armenia has entered into a new qualitative level, among core challenges of which there are unprecedented quick pace of banking activities digitalization and financial stability provision in the light of heated competition, uncertainty and permanent increase of the risks. The

¹ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» ՀՀ ԿԲ կանոնակարգ 2:

imperative requirement of the situation shaped in financial-banking system is the assessment of activities efficiency and profitability coefficients of separate banks as well as the banking system itself, particularly qualitative analysis and disclosed trends real assessment.

ՍԵՐԳԵՅ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*«Ֆինանսական ներգրավվածություն»
գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար,
տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հիմնաբառեր. *Ֆինանսական ներգրավվածություն, ֆինանսական գրագիտություն, ֆինանսական կրթություն, ֆինանսական կայունություն, ֆինանսական միջնորդություն, տնտեսական աճ*

Ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո «ֆինանսական ներգրավվածություն» և «ֆինանսական գրագիտություն» հասկացությունները լայն կիրառություն են ստացել: Միջազգային ֆինանսական կազմակերպություններն իրականացրել են հետազոտություններ: Ընդունվել է «ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը»: Ֆինանսական կրթումը կարևորագույն գործոն է ֆինանսական բարեկեցության բարելավման, ֆինանսական միջնորդության ավելացման և ֆինանսական կայունության ապահովման համար: Իսկ ֆինանսական կրթումը գործընթաց է, որի արդյունքում անձը դառնում է ֆինանսապես գրագետ: Երբ ֆինանսական կրթման արդյունքում անձը դառնում է ֆինանսապես գրագետ, ապա իրապես ֆինանսապես գրագետ անձը միաժամանակ ֆինանսապես ներգրավված անձն է:

«Ֆինանսական ներգրավվածություն» և «ֆինանսական գրագիտություն» հասկացությունները լայն կիրառություն են ստացել վերջին շրջանում, իսկ 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակաշրջանում դրանք դիտարկվում են որպես ոչ միայն ֆինանսական համակարգերի կայունության ապահովման միջոցներ, այլև տնտեսական աճի հիմք:

«Ֆինանսական ներգրավվածությունը լայն ճանաչում է ստացել որպես աղքատության կրճատման և համընդհանուր տնտեսական աճ ապահովելու միջոց: Ֆինանսական ներգրավվածությունն ինքնանպատակ չէ, այլ նպատակին հասնելու միջոց է, և աճում են ապացույցները, որ այն բերում է էական օգուտներ առանձին անձանց համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ մարդիկ մասնակից են ֆինանսական համակար-